ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2018 թվականի N 31-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և 42-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արթուր Արտուշի Արտուշյանին, Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 3/1 հասցեում 2018 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

2. Թույլատրել «ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ-ին, տնօրեն՝ Ալինա Աղաբեկյան, Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 5/34 և 5/35 հասցեի հողամասին հարակից տարածքում տեղադրելու արտաքին գովազդ:

3. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

4. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2018 թվականի N 32-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2018 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) անհատ ձեռնարկատեր Արուսյակ Շուրայի Մելիքսեթյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 84 հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Արիֆոն Ռադիկի Շահգելդյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Հաղթանակի փողոցի թիվ 26 հասցեում:

3) անհատ ձեռնարկատեր Անահիտ Արշավիրի Հայրապետյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի թիվ 2 հասցեում:

2. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2018 թվականի N 33-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2018 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) անհատ ձեռնարկատեր Ռոման Ատոմի Մովսիսյանին, Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 3-րդ փողոցի թիվ 1 հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Զորիկ Սերյոժայի Գալստյանին, Ջրվեժ համայնքի Զովք գյուղի Գլխավոր խճուղու թիվ 14/2 հասցեում:

2. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունվարի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2018 թվականի N 34-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գագիկ Վառլենի Սարդարյանի (ծնված՝ 1960 թվականի փետրվարի 23-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 43-րդ փողոցի թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2085768, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2006 թվականի հունվարի 5-ին, «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հունվարի 18-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ բացված երկու դուռը և չորս պատուհանները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գագիկ Վառլենի Սարդարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 43-րդ փողոցի թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում 2016 թվականին իրականացրել է շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել բնակելի տուն՝ 128,38 քառ.մետր, շվաքարան՝ 20,15 քառ.մետր, աստիճան՝ 7,49 քառ.մետր, ձեղնահարկ՝ 52,50 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 10,22 քառ.մետր, աստիճան՝ 6,94 քառ.մետր, հենապատ՝ 22,0 քառ.մետր, շվաքարան՝ 5,04 քառ.մետր, պարիսպ՝ 14,44 քառ.մետր արտաքին մակերեսներով և ինքնակամ բացել է երկու դուռ և չորս պատուհաններ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գագիկ Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 43-րդ փողոցի թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների և ինքնակամ բացված դռների ու պատուհանների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Գագիկ Վառլենի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 43-րդ փողոցի թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված երկու դուռն ու չորս պատուհանները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 659 860 (վեց հարյուր հիսունինը հազար ութ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունվարի 30
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2018 թվականի N 35-Ա

ՋՐՎԵԺԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել Արտակ Քաջիկի Բարխուդարյանը (ծնված՝ 1983 թվականի դեկտեմբերի 3-ին)՝ սեփականության իրավունքով ընտանիքին պատկանող 5-րդ փողոցի թիվ 27 հասցեում գտնվող բնակելի տան առաջին հարկից՝ թիվ 6, թիվ 7, թիվ 8, թիվ 9 և թիվ 10 տարածքների՝ 55,67 քառ.մետր ընդհանուր մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական համար 23092017-07-0091, տրված 2017 թվականի սեպտեմբերի 23-ին և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հունվարի 17-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) գործառական նշանակությունը հասարակական նպատակային նշանակության շենք-շինությունների, որպես բժշկական սպասարկման շենք սահմանելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի, 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Արտակ Քաջիկի Բարխուդարյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 5-րդ փողոցի թիվ 27 հասցեում գտնվող բնակելի տան առաջին հարկից 55,67 քառ.մետր մակերեսով հատվածի գործառական նշանակությունը, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների սահմանել որպես հասարակական նպատակային նշանակության շենք-շինությունների՝ բժշկական սպասարկման շենքի:

2. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված տարածքը հաշվառել որպես հասարակական նշանակության օբյեկտ և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում:

3. Պարտավորեցնել Արտակ Քաջիկի Բարխուդարյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանումում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունվարի 31
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2018 թվականի N 36-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. «Գուդվին Բետ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արտակ Մկրտչյան, որպես վիճակախաղերի կազմակերպման օբյեկտ, 2018 թվականի օրացուցային տարվա համար տալ ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվություն Ջրվեժի 41-րդ փողոցի թիվ 2-4 հասցեում:

2. Պարտավորեցնել «Գուդվին Բետ» ՍՊԸ-ին, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. հունվարի 31
գ. Ջրվեժ